JUVENTUS ACADEMY ARMENIA

**Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետ**
**պարոն Հ.Բալասյանին**

**«ՆԵՔՍԹ ՋԵՆ ՍՊՈՐՏՍ» ՍՊԸ**
**Տնօրեն՝ Ա. Սադոյանից**

**N: 11/01**

**ք. Երևան** **01.11.2024թ.**

Հարգելի պարոն Բալասյան,

Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման նպատակով «Նեքսթ Ջեն Սպորտս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2024թ. ապրիլի 2-ին պայմանագիր է կնքել աշխարհահռչակ իտալական Թուրինի Յուվենտուս ֆուտբոլային ակումբի հետ՝ Հայաստանի Հանրապետությունում Յուվենտուս ֆուտբոլային ակադեմիա հիմնելու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2024թ. 1388-Ա որոշմամբ հավանություն է տվել Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանն ուղղված մեր ընկերության մեծամաշտաբ ներդրումային ծրագրին: Նույն որոշմամբ ,,Հրազդան Մարզահամալիր,, ՓԲ ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը՝ իր հաշվեկշռում գտնվող անշարժ գույքով, ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է «Նեքսթ Ջեն Սպորտս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Մեր ընկերությունը մտադրված է իր առջև դրված խնդիրները լուծելու համար, ինչպես նաև հայրենական ֆուտբոլը զարգացնելու նպատակով կառուցել միջազգային չափանիշներին համապատասխանող ֆուտբոլային մարզադաշտ իր ենթակառուցվածքներով:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ դիտարկել Բյուրեղավանի համայնքային մարզադաշտը իր հարակից տարածքներով ուղղակի վաճառքի ձևով «Նեքսթ Ջեն Սպորտս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օտարելու հարցը:

Նշված ծրագրի իրականացման համար նախատեսվող ներդրման արժեքը կներկայացվի տարածքի նախնական ինժիներաերկրաբանական ուսումնասիրությունների և նախագծային աշխատանքների կատարելուց հետո:

Առդիր՝ ներդրումային ծրագիրը:

Հարգանքով՝

**տնօրեն՝** **Ա. Սադոյան**

«ՆԵՔՍ ՋԵՆ ՍՊՈՐՏՍ» "NEXT GEN SPORTS" 02315867

ngensports@gmail.com +374 12 343434
www.ngensports.com 34 Garegin Nzhdeh street, Yerevan, Armenia (0006)